

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/10

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Էդիկ Գարզոյանի 23.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 165 որոշման դեմ:

Էդիկ Գարզոյանի գանգատում բերված փաստարկները.

1/ Սույն թվականի հուլիսի 25-ին փոստային առաքմամբ ստացվել է ՀՀ ՖՆ Գավառի տարածքային հարկային տեսչության կողմից 23.07.2014 թ-ին կայացված հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ թիվ 165 որոշումը, որի համաձայն՝ 18.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Էդիկ Գարզոյանը /ՀՎՀՀ 74305641, հասցեն՝ ք.Գավառ, Ազատության 21/23/ ունի 232.347 դրամ չկատարված հարկային պարտավորություն, այդ թվում՝ եկամտահարկ 179.690 դրամ, որից ապառք 98.000 դրամ, տույժ 81692 դրամ, առաջացել է 2001–2002 թ.թ. ընթացքում և հաստատագրված վճար 52.655 դրամ, որից ապառք 21.191 դրամ, տույժ 23464 դրամ, առաջացել է 2001–2002 թ.թ. ընթացքում: Մինչդեռ, նշված ժամանակահատվածում հարկային պարտավորությունները յուրաքանչյուր ամիս վճարվել են հարկային տեսչության համապատասխան աշխատակցին: Ընդ որում, 12.02.2004 թ-ի դրությամբ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Ա/Ձ Էդիկ Գարզոյանի գործունեությունը դադարեցվել է, իսկ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 2004 թ-ին չէր կարող դադարեցնել Ա/Ձ-ի գործունեությունն առանց հարկային պարտավորությունների ամբողջությամբ կատարված լինելու:

Պետք է նկատել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի ուժով՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2/ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Մինչդեռ, վարչական մարմինը հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ թիվ 165 որոշումը կայացրել է 12 տարի անց, այսինքն՝ իրավախախտումը, ըստ վարչական մարմնի տվյալների իրականացվել է 2001–2002 թ.թ., սակայն պատասխանատվության ենթարկել է 23.07.2014 թ-ին:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ գանգատաբերը խնդրում է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչել:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ Գավառի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Էդիկ Գարզոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 23.07.2014 թ-ին ընդունել է թիվ 165 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 18.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Էդիկ Գարզոյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 232.347 դրամ, որը ենթակա է գանձման:

Եկամտահարկի գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 179.690 դրամ (որից ապառք 98.000 դրամ, տույժ 81692 դրամ), որն առաջացել է 2001 թ-ի 4-րդ եռամսյակի և 2002 թ-ի մայիս ամսվա համար Ա/Ձ Էդիկ Գարզոյանի կողմից հարկային տեսչություն եկամտահարկի գծով ներկայացված հաշվետվություններով:

Հաստատագրված վճարի գծով պարտքը կազմում է 52.655 դրամ (որից ապառք 21.191 դրամ, տույժ 23464 դրամ), որն առաջացել է 2001 թ-ի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր և 2002 թ-ի մայիսից մինչև սեպտեմբեր ամիսների համար հաստատագրված վճարի գծով ներկայացված հաշվետվություններով:

Քննարկվող դեպքում գործում առկա ապացույցները հիմնավորում են Էդիկ Գարզոյանի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված պարտավորությունները վերջինիս կողմից սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով դրանք գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Գանգատում բերված պնդման վերաբերյալ, որ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 2004 թ-ին չէր կարող դադարեցնել Ա/Ձ Էդիկ Գարզոյանի գործունեությունն առանց հարկային պարտավորությունների ամբողջությամբ կատարված լինելու, նշվեց հետևյալը:

ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Գավառի տարածքային բաժնի կողմից Ա/Ձ Էդիկ Գարզոյանի հարկային պարտավորությունների վերաբերյալ 07.10.2004 թ-ի գրությամբ կատարված հարցմանը Գեղարքունիքի ՏՀՏ 08.12.2004 թ-ի գրությամբ տրվել է պատասխան, որի համաձայն Ա/Ձ Էդիկ Գարզոյանը վերջին երեք տարիների ընթացքում ունի ՏՀՏ չներկայացված հաշվետվություններ, որի համար չի կարող պարզեցված ընթացակարգով լուծարվել: Պատասխան գրությամբ հայտնվել է նաև, որ Ա/Ձ Էդիկ Գարզոյանի լուծարումը պետք է կատարվի միայն ՏՀՏ կողմից լուծարային ստուգում կատարելուց և հարկային պարտավորություններն ամբողջությամբ բյուջե վճարելուց հետո:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Էդիկ Գարզոյանի գործունեությունը դադարեցվել է (լուծարվել է) առանց Գեղարքունիքի ՏՀՏ 08.12.2004 թ-ի գրությունում նշված ընթացակարգի պահպանման:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ տվյալ դեպքում կիրառելի են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները, որի հետևանքով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջադրվել, ապա նշվեց, որ դրանք հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ վերոգրյալ պարտավորությունները, դրանք առաջանալու օրվանից, գրանցվել են Ա/Ձ էդիկ Գարգոյանի անձնական հաշվի քարտերում: Այսինքն, այդ պարտավորությունները հարկային մարմնին հայտնի են դարձել ոչ թե Որոշումը կայացնելիս, այլ՝ դրանք առաջանալու առաջին իսկ օրվանից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումն իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Գավառի ՏՀՏ պետի 23.07.2014 թ-ի թիվ 165 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

